ՉՇԵՂՈՒԵՆՔ ԱԶԳԻ ՕՐԷՆՔԻՑ

ՎԱՐԱՆԴ ՓԱՓԱԶԵԱՆ

Ներկայացուող յօդուածում հեղինակն անդրադառնում է Շարժման ընթացքում թոյլ տրուած սկզբունքային սխալներին, որոնց պատճառով համազգային պայքարը վերածուեց մի նեղ խմբաւորման շահերն արտայայտող հատուածական պայքարի։ Վերլուծում են Շարժման տրամաբանութիւնից բխող ազգային-քաղաքական, բարոյական եւ ընկերային շահերից հեռանալու պատճառները, որոնց հետեւանքով Հայաստանի նոր իշխանութիւնները ընկան նախորդների հունը։

Ապրում ենք Ազգի պատմութեան շրջադարձային երրորդ ժամանակաշրջանը։ Հազարամեայ ստրկութիւնից յետոյ, 1918 թուին, մեր ուղին լուսաւորուեց Սարդարապատով եւ Մայիս 28ով, բայց չկարողացանք տէր կանգնել մեր ստեղծագործութեանը եւ նորից ստրկացանք։ Եօթանասուն տարիների համայնավարական սպանիչ եւ խեղող լուծից յետոյ, այսօր հորիզոնին վրայ ուրուագծւում է Ազգի վերականգնման ուղին. բայց մենք նորից տատանւում ենք, դժուարանում ենք քայլել լեռն ի վեր եւ փնտռում ենք հեշտ զառիթափ։ Շրջադարձային առաջին ժամանակաշրջանից՝ Վարդանանց օրից, մենք իմացել ենք, որ մեր փրկութիւնը մեր անդուլ պայքարի մէջն է. պայքար՝ հոգիների եւ մտքերի ազատութեան, պայքար՝ հայրենիքի ազատագրութեան համար։ Բայց շեղւում ենք դէպի խեղճութիւն, համակերպում եւ ստրկացում։ Երեւի տակաւին չի յստակացել, որ մեզ, որպէս ազգ սպառնում է անհետացում, եթէ չհետեւենք Վարդանի օրէնքին. անհետացում կամ որպէս մարդ, կամ որպէս հայ՝ միեւնոյնն է։

Ամենուրէք տիրում է շուարում եւ անտարբերութիւն։ Ժողովրդի ազնուութեան, քաջութեան եւ գաղափարապաշտութեան վկան՝ Ղարաբաղեան հոյակապ շարժումը դարձել է էպիկական անցեալ։ Շարժման արժէքները ստացել են ծաղրանկարային բնոյթ։ Նրա գաղափարական առանցքները օգտագործւում են որպէս առեւտրի եւ սակարկութեան նիւթ. պայքարողները փախչում են ռազմադաշտից եւ ծպտւում փերեզակի կամ ծաղրածուի շորերով. հայ քաղաքական միտքը, փոխանակ ցոյց տալու պայքարի յաջորդ հանգրուանը, փորձում է ճշտել, թէ ո՞ր կայսրութեան ստրուկը պիտի լինել, ո՞րն է աւելի շահաբեր եւ հաճելի։

Արցախի Հայաստանի հետ միաւորման պահանջը հիմքն էր Շարժման եւ արտայայտիչը՝ Ազգի մարտունակութեան եւ կենսունակութեան։ Շարժման ղեկավարութիւնը ոչ միայն տէր չկանգնեց Արցախեան Պահանջատիրութեան, այլ այն նկատեց իր իշխանութեան երթը խանգարող տարր։ Այսօր, Արցախի պայքարը նահանջում է անկողմնացոյց, իսկ Հայաստանի իշխանութիւնները զբաղւում են հատուածական պայքարներով եւ իրենց իշխանութիւնը յաւերժացնելու ծառայող մանեւրներով։ Ինչպէս խորհրդային-համայնավար վարչակարգի օրերին, այսօր եւս տիրապետում է լենինեան քաղաքական տրամաբանութիւնը՝ բոլոր միջոցները ներելի են իշխանութեան հասնելու եւ այն պահելու համար։ Մարդկային եւ ազգային բարոյականը նահանջում է եսի եւ շահի ճնշումին առաջ։ Արցախի ընկրկումը պիտի նկատել ուղղակի արդիւնքը Հայաստանի իշխանութիւնների վարած անհորիզոն քաղաքականութեան։ Ղարաբաղեան շարժման ղեկավարութիւնը պատասխանատու է շարժման տեղատուութեան համար։

Այս՝ յետադէմ քաղաքականութեան առանցքը հատուածապաշտութիւնն է։ Օպերայի բազմութիւնները գոռացին՝ «հայեր, միացէ՛ք», բայց Շարժման ղեկավարութիւնը չկարողացաւ վարել համահայկական քաղաքականութիւն, տէր կանգնել բոլոր հատուածներին եւ հայ ժողովրդի բեկորները եւ տարբեր խմբաւորումները միացնել մէկ նպատակի եւ մէկ պայքարի շուրջ։ Շարժման ղեկավարութիւնը եղաւ բնական ծնունդը խորհրդային-համայնավար հասարակարգին. նա չկարողացաւ յաղթահարել եօթանասուն տարիների բոլշեւիկեան հատուածականութիւնը եւ գիւղերի ու գաւառների յատուկ տեղացիական ամուլ մտայնութիւնը։

Այստեղ պիտի շեշտել, որ Հայաստանն է Ազգի լինելութեան առանցքը։ Իր տարածքով եւ բնակչութեամբ, իր մշակոյթով եւ տնտեսութեամբ եւ պետական սաղմնային դրութեամբ, Հայաստանի հանրապետութիւնը հիմն է եւ միջնաբերդը հայ ժողովրդի պայքարներին։ Բայց, արժէք է նաեւ ամբողջ ժողովուրդը, քանի որ բոլոր հայերը ձգտում են դէպի հայրենիք եւ հայկական տեղծագործ պայքար։ Ճիշտ է, որ Ազգը ապրում է գաղութային կեանք եւ ոչ միայն արտերկրում. Հայաստանը եւս գաղութ է, իսկ Հայաստանի անկախացումը եւ ազատագրումը պէտք է լինի արդիւնքը Ազգի բոլոր հատուածների միացեալ, անդուլ ճիգին։ Հայ ժողովրդի հայաստանեան հատուածի փրկութիւնը գտնւում է ամբողջ Ազգի միասնութեան մէջ։

Սպասւում էր, որ եօթանասուն տարիների ապազգային եւ հատուածապաշտ վարչակարգից յետոյ, համաժողովրդային պահանջատիրութեան ծոցից ծնած ղեկավարութիւնը ստանձնէր Ազգի եւ Հայրենիքի ղեկը, ցուցաբերելով լայնածիր եւ համապարփակ մօտեցում ազգային եւ քաղաքական բոլոր խնդիրների նկատմամբ։ Եղաւ հակառակը. «Հայոց համազգային շարժում» անուանուեց, ինքն իր համար համազգային տարազ ձեւաւորած «Ղարաբաղ կոմիտէ»ն Շարժման գաղափարական եւ բարոյական դրամագլուխը մսխեց իր նեղ շահերի պաշտպանութեան համար։ Այսօր, նոյն ՀՀՇն ընդունում է իր մեծ սխալները, բայց դժուարանում է դուրս գալ անելից, քանի նրան պակասում է նաեւ կազմակերպական առողջ կառոյցը։

Հայաստանի նոր իշխանութիւնների տկարացման պատճառը պիտի փնտռել այն իրողութեան մէջ, որ նրանք չուզեցին մղել համազգային պայքար, նահանջեցին եւ ծուարեցին հայաստանեան հատուածական մտածողութեան սահմաններում եւ այսպէս, յեղափոխական առաջնորդից վերածուեցին սովորական կառավարութեան, եւ խորհրդային իրականութեան մէջ, կառավարութիւնը հետեւեց խորհրդային հասարակարգի օրինաչափութեան՝ կաշառակերութեան, կլանի քաջալերման, անձի պաշտամունքի եւ հատուածական հալածանքների։ Բայց, եթէ Հայաստանի նախորդ վարիչները կարող էին յենուել համայնավար կուսակցութեան եւ պետական պատժիչ մեքենային վրայ, նոր իշխանութիւնները չունէին կազմակերպական լծակ, իսկ ՊԱԿը եւ ներքին գործերի ուժերը վարկաբեկուած էին նոյնինքն Շարժման որպէս արդիւնք։ Հետեւաբար, իշխանութիւնը պահելու եւ տնտեսական սուր տագնապին մէջ կառավարութեան դերը խաղալու համար, Հայաստանի նոր իշխանութիւնները դիմեցին հեշտ միջոցին՝ Շարժման ծնած արժէքների օգտագործման, եւ այսպէս՝ առաջ քաշուեց քաղաքական ճկունութեան եւ մանեւրի լոզունգը, որին զոհաբերուեցին ժողովրդի յեղափոխական պահանջները։ Յեղափոխականը այլափոխուեց յետադէմ իշխանաւորի։ Քաղաքական մանեւրի նիւթ նկատուեցին՝ գոյապահպանական պահանջը, Արցախի միացման պայքարը, անկախութեան գաղափարը եւ տնտեսական-ընկերային վերականգնումը։ «Նայիրիտ»ի փակումը բացատրուեց որպէս համայնավար վարչակարգը տապալելու միջոց, իսկ նրա վերաբացումը՝ անկախութեան փորձնբացում տնտեսական ինքնուրոյնութեան նպաստող ակտ։ Արցախի պայքարը իշխանութեան հասնելու ուղին էր, քանի ամբողջ Ազգը տագնապում էր հայկական գաւթուած հողի եւ գերեվարուած ժողովրդի ճակատագրով. իշխանութեան հասնելուց յետոյ, ղեկավարութիւնը «բացատրեց» թէ Արցախի պայքարը պատկանում է նախ եւ առաջ արցախցիներին, թէ Հայաստանը տարածքային պահանջ չունի իր հարեւաններից եւ խնդիրը վերաբերւում է պարզապէս Արցախի բնակիչների մարդկային իրաւունքների պաշտպանութեան. այսպէս, Արցախը զոհաբերուեց հայաստանեան հատուածի շահերին։ Անկախութեան գաղափարը, իր կարգին, դարձաւ քաղաքական մանեւրի լծակ եւ Անկախութեան հանրաքուէն ներկայացուեց որպէս աւելի ուժեղ դիրքերից Միութենական պայմանագրի շուրջ բանակցելու միջոց։ Միւս կողմից, խորհրդային-համայնավար ապարատին դէմ բոցաշունչ ամբաստանագրեր կարդացողները այսօր խոստովանում են, թէ Շարժումը ծնել է չարաշահող եւ շահագործող նոր խաւ, որ փաստօրէն գործակցում է ստուերային տնտեսութեան «իշխաններ»ի հետ եւ սկզբունքը վաճառում է վալիւտայով։ Երեւում է, որ «Ղարաբաղ կոմիտէ»ն եւ նրա սարքած ՀՀՇն շատ թանկ գին են վճարել ժողովրդին, նրա Շարժման եւ բարոյականի հաշուին։ Բայց ի՞նչ նպատակով եւ արդեօք քաղաքական եւ տնտեսական շահ ապահովելով ժողովրդին եւ պետութեանը։

Այնքան ժամանակ, որ ղեկավարութիւնը ամբողջութեամբ չի բացայայտել պատմութեան բոլոր ծալքերը, ճիշտ պիտի չլինի խօսել նպատակի մասին, որովհետեւ անպարկեշտ եւ շահախնդիր անձերի կողքին ղեկավարութեան մէջ կան նաեւ բազմաթիւ գաղափարական եւ պարկեշտ հայեր։ Պէտք է յուսալ, որ ղեկավարութիւնը ինք կը դատի իր մէջ բոյն դրած պատեհապաշտ եւ ազգավնաս տարրը։

Արդիւնքը սակայն կարելի՞ է դատել։ Հակառակ սկզբունքների եւ արժէքների շահարկման եւ հակառակ բարոյական լուրջ շեղումներին, ոչ միայն շահ չէ ապահովուած, այլ ընդհակառակը. Արցախը ընկղմում է ղեկավարութեան մանեւրների եւ երկչոտութեան արանքում, անզուսպ «Նայիրիտ»ը շարունակում է թունաւորել ժողովրդի զաւակներին, խորհրդային յոռի բարքերը տիրապետում են պետական մեքենային, շարունակւում են անտէր մնալ մօտաւորապէս եօթ հարիւր հազար աղէտեալ եւ բռնագաղթուած, «բիզնես»ի անունով ներկայացող փերեզակութիւնը եւ կողոպուտը չեն կարողանում վարագուրել թիկունքում կազմուող գործազուրկների խոշոր բանակը, խորանում են ընկերային ցաւերը եւ հակասութիւնները, մտաւորական ոլորտը ողողւում է աժան եւ ինքնանպատակ դատողութիւններով, արժեզրկւում է արեւմտեան քաղաքակրթութեան ձեւական եւ անմակարդակ ընդօրինակումը, ներթափանցում են ժողովուրդը շահագործող սին հաւատներ, ազգավնաս կազմակերպութիւններ եւ տարբեր հացկատակներ, մշակութային եւ հասարակական կեանքի հայացումը ձախողում է նեղմտութեամբ, փոքրոգութեամբ եւ հեռուստացոյցային մեծամիտ բանգիտութեամբ, տնտեսական վերականգնումը հաւասարեցւում է աշխատաւորի եւ աշխատանքի անսանձ շահագործման եւ օտարի դուռը մուրացկանութեան հետ, խորանում է անվստահութեան եւ կասկածամտութեան վիհը ժողովրդի եւ իշխող խաւերի միջեւ, մարդիկ իրար մէջ ուզում են տեսնել միայն վատը, չքացել է Շարժման յեղափոխական լաւատեսութիւնը, քայքայւում է հասարակական բարոյականը եւ անում են անբարոյութիւնը, յանցագործութիւնը եւ խաբեբայութիւնը, քաղաքական միտքը շուարած է համազգային եւ հատուածական շահերի միջեւ, նա պայքարի ռազմավարութիւնը շփոթում է մոմենտի մարտավարութեան հետ եւ ազգային շահը զիջում է խմբաւորումի շահին, թրքամէտ եւ ռուսամէտ քաղաքականութիւնների ձեւական հակադրութիւնը չի յաջողում ծածկել այն իրողութիւնը, որ ի վերջոյ յաղթանակում է Կենտրոնի քաղաքականութիւնը եւ Հայաստանը գնում է հաւատարմութիւն յայտնելու կայսեր։ Իրար չեն մօտենում հայրենիք եւ սփիւռք եւ իրարից աւելի օտարւում են հայ զանգուածները։ Երկիրը անկումային վիճակից դուրս բերելու պատրուակով, իշխանութիւնները առաջ են քաշում հանրապետութեան նախագահի պաշտօնը, որ լի է հակաժողովրդավար բնոյթով եւ խոստանում է ներքին նոր տագնապներ։ Այսպէս շահարկւում են եւ ապարդիւն վատնւում ոչ միայն Շարժման պահանջները, այլ նաեւ Ազգի գաղափարական-բարոյական սկզբունքները՝ անկախութիւնը եւ ժողովրդավարութիւնը։

Այդ ինչպէ՞ս եղաւ, որ թեւաթափուեց ղարաբաղեան արծիւը. ինչպէ՞ս եղաւ, որ միասնութեան յաջորդեց հատուածականութիւնը. ի՞նչն է, որ ազնիւ եւ ամուր ժողովուրդը վերածեց կրաւորական զանգուածի։

Պէտք է հաստատել, որ Շարժումը սկսուեց ակամայ։ Եւ յենուեց, վերակառուցման գծով Ադրբեջանում, Արցախում եւ Հայաստանում Մոսկուայի նախաձեռնութիւններին։ Նա չեղաւ արդիւնքը ազգային նպատակով եւ գաղափարախօսութեամբ առաջնորդուող մի ռազմավարութեան եւ ընդհանրապէս մնաց հաւատարիմ խորհրդային հասարակարգի մտածելակերպին եւ գործելակերպին։ Նրան պակասում էր ազգային կազմակերպութիւնը եւ գիտակից ղեկավարութիւնը. նա ծնաւ իր, ցուցարար ամբոխի ղեկավարութիւնը, որ շուտով վերափոխուեց եւ արցախեան պահանջատէրից անցաւ գորբաչովեան վերակառուցման եւ ժողովրդավարականացման ջատագովներին, որոնք առաջ քաշեցին վարչակարգի փոփոխման հարց, համայնավար իշխանութիւնը խորհուրդների իշխանութեամբ փոխարինելու գորբաչովեան տրամաբանութեամբ։ Բեմահարթակի ղեկավարները եղան ամբոխի խօսնակները, նրանք սովորեցին ամբոխը ղեկավարելու եւ մանեւրներ անելու արուեստը եւ դարձան ամբոխավար եւ ոչ՝ Ազգի առաջնորդ։ Ազգը ղեկավարելու համար անհրաժեշտ էր ունենալ համազգային տեսլական եւ թօթափել խորհրդային Հայաստանի վարիչների գաւառային մտածողութիւնը. դժբախտաբար, Շարժման ղեկավարութիւնը չկարողացաւ քանդել իր միտքն ու հոգին կաշկանդող եօթանասունամեայ կապանքները եւ պահեց իր միտինգային ու հատուածական դիմագիծը թէ Գերագոյն խորհրդում եւ թէ կառավարական գործի ասպարէզում. նա չծնաւ ազգային կազմակերպութիւն, որ պիտի փոխարինէր համայնավար կուսակցութեան փտած ցանցը եւ չստեղծեց օրէնքի իշխանութիւն։

Այսպէս, Հայաստանի նոր իշխանութիւնները ակամայ ընկան նախորդների հունը։ Ինչպէս անցեալում, Հայաստանի քաղաքական-հասարակական կեանքին տիրապետում են անձնակենտրոն ոճը, հատուածականութիւնը եւ անսկզբունք շահախնդրութիւնը. նոր Գերագոյն խորհուրդը չի համարձակւում գլուխ բարձրացնել եւ ընդհանրապէս, իր նախորդներին նման, հետեւում է իշխանութիւններին. համայնավարները փոխարինուել են իշխող եւ շահագործող նոր խմբաւորումով, որ ասում է մի բան, բայց անում

Շար. էջ 10 →

← Սկիզբը էջ 9

հակառակը, այնպէս, ինչպէս եղաւ եօթանասուն տարիների սուտի եւ կեղծիքի ժամանակաշրջանում:

Միւս կողմից, Հայաստանի նոր իշխանութիւնները փորձում են, ինչպէս համայնավարները, հակակշռել Սփիւռքը, այն տարանջատելով.նրանք իբրեւ գործակից գտնում են այն ուժերը, որոնք եօթանասուն տարի անարգեցին Մայիս 28ը եւ եռագոյն դրօշը եւ գովաբանեցին ստալինեան եւ բրեժնեւեան վարչակարգերը: Յատկանշական է, որ Եռագոյնը եւ Մայիս 28ը ինքնաբերաբար ընդունւում էին ժողովրդի կողմից, մինչդեռ ղեկավարութիւնը ուզում է անհետ կերպով վերախմբագրել օրհներգը, իսկ Հայաստանի Հանրապետութեան զերբին հակադրում է խորհրդային Հայաստանի զերբի «վերակառուցուած» տարբերակը:

Այս ձեւով, քաղաքական պայքարի լենինեան ոճով եւ քաղաքական ուղղութեան խորհրդային հասկացութեամբ Հայաստանը ընթանում է դէպի համակերպում ռուսական կայսրութեան, դէպի կենտրոնաձիգ եւ հակաժողովրդավար վարչակարգ եւ ներազգային հատուածական քանդիչ հակամարտութիւն: Յեղափոխութիւնը ձախողում է, յաղթանակում է ցինիզմը եւ նիհիլիզմը, տիրում է պահպանողականը եւ պատեհապաշտը:

Այս տխուր վիճակին ի տես, իշխանութիւնները պնդում են, թէ պէտք չէ մատնուիլ խուճապի, քանի անկախութեան եւ շուկայական տնտեսութեան ուղին բռնած ժողովրդին համար բնական եւ յաղթահարելի պիտի լինեն նմանօրինակ տագնապները, նրանք պահանջում են յաւելեալ ժամանակ եւ յաւելեալ իրաւասութիւններ, որպէսզի կարողանան դիմագրաւել դժուարութիւնները, այսինքն՝ պահանջում են վստահութեան արտայայտութիւն: Բայց ինչպէ՞ս վստահել մի իշխանութեան, որ չունի յստակ նպատակ եւ ռազմավարութիւն, որ միայն հակազդում է եւ չի նախաձեռնում, որ ծոյլ է ընդհանրապէս, որ մերժում է բարոյական կաշկանդումները եւ Ազգի նպատակներին եւ նրա առօրեայ հարցերի նկատմամբ վարւում է բացայայտ ցինիզմով:

Անցնող երեք տարիներում շատ խօսուեց «քաղաքակիրթ» ազգերից օրինակ առնելու մասին: Բայց նմանուելու փորձերը եղան ձեւական եւ փուճ: Կառոյցների եւ օրէնքների ընդօրինակումով չէ, որ պիտի լինենք քաղաքակիրթ, այլ բարոյական հասկացողութիւնների արժեւորումով: Արեւմտեան երկրներում, քաղաքակրթութեան գագաթը գրաւում են ժողովրդավարական, բարոյական սկզբունքները, որոնք առաջին հերթին ղեկավարից պահանջում են պատասխանատուութեան գիտակցութիւն: Հայաստանի իշխանութիւնները, եթէ իրապէս ցանկանում են, որ ժողովուրդը, քայլ առ քայլ բարձրանայ քաղաքակրթութեան աստիճաններից, ապա իրենք պիտի տան օրինակը եւ ցոյց տան պատասխանատուութեան զգացմունք, լինեն համեստ եւ պարկեշտ. չի կարելի ժողովուրդը դաստիարակել քաղաքական մանեւրներով. այս ձեւով կը սովորեցուի միայն ճարպկութիւն եւ անսկզբունք գործելաձեւ: Հասարակական վարքագծի վերափոխման համար անհրաժեշտ են մեծահոգութիւն, անկեղծութիւն եւ սկզբունքայնութիւն:

Նմանօրինակ քննադատութիւնների դիմաց, իշխանութիւնները ունենում են երկու տարբեր հակազդեցութիւններ: Եթէ նրանք ինքնավստահ են, ապա դիմում են հեգնանքի կամ մարտահրաւէրի. քննադատը նկատւում է խափանարար, նրան առաջարկւում է ժողովուրդը հանել իշխանութեան դէմ, եթէ կարող է. նա նկատւում է իշխանատենչ տարր: Այս ոճը տիպիկ լենինեան է. միայն թէ Լենինին պակասում էր հեռուստացոյցը եւ նա պարտաւորւում էր գնդակահարել իր ընդդիմադիրներին:

Իսկ եթէ ուժեղ է քննադատական ճնշումը, ապա իշխանութիւնները պաշտպանւում են նշելով իրենց «իրագործումները»՝ սեփականաշնորհումը եւ անկախութեան գործընթացը: Դժբախտաբար, անհիմն է նրանց ինքնագոհութիւնը, որովհետեւ սեփականաշնորհման ակտը ինքնանպատակ է, չունի տնտեսական ծրագրային հիմք եւ լի է թէ տնտեսական եւ թէ ընկերային ականներով, քանի բացակայում են տեխնիկական միջոցները, ջուրը, սերմը, արտադրութեան բաշխման համակարգը եւ ընկերային ապահովութեան տարբեր հասկացութիւններ եւ օրէնքներ: Խանութների անուրդով վաճառքը պետութեանը ապահովում է փող, բայց ոչինչ չի փոխում տնտեսական համակարգում, քանի վերականգնման մղիչ ուժը արդիւնաբերութեան աճն է եւ ոչ դրամագլխի փակ շրջանառութիւնը: Աւելին, ստեղծւում է դրամատէր խաւի նոր միֆ, իբր նա պէտք է լինի անկախութեան գլխաւոր պաշտպանը. մինչդեռ ստրկացուած ժողովուրդների պատմութիւնը վկայում է, որ ունեւոր խաւը միշտ գործակցել է գաղութատիրոջ հետ, քանի փողը բարոյական չունի եւ չի ճանաչում ազգային արժէքներ:

Եւ այսպէս, հասնում ենք ապատեղեկատուութեան եւ խօսքի անպարարութեան գլուխ գործոցին՝ «անկախութեան գործընթաց»ին, որի հեղինակութեան իրաւունքը ի վերջոյ պատկանում է Մոսկուային: Այս ճարպիկ գիտի առաւելութիւնը կայանում է երկու տարբեր յղացքների արհեստական զուգորդութեան մէջ. պարզ պիտի լինի, որ «գործընթաց» է ժողովրդի ամբողջ պատմութիւնը, որ կարող է գնալ դէպի անկախութիւն եւ կամ դէպի ստրկացում, այդ ցոյց կը տայ ժամանակը: Մինչդեռ անկախութիւնը բեկումնային պահ է, որ յաջորդում է անկախութեան պայքարներին: Փաստօրէն, այս ձեւաւորումով Կենտրոնը ներկայանում է որպէս «քաղաքակիրթ» եւ «ժողովրդավար»: Սկսում է ինչ որ ձեւական գործընթաց, որի ընթացքում կենտրոնին յաջողւում է մարել անկախութեան բոցերը եւ անջատողական ձգտումները եւ «մոլորածներ»ին վերադարձնել կայսերական փարախ:

Կենտրոնի այս եւ այլ մանեւրները աւելի խորացնում են ժողովրդի ապրած տագնապները եւ բարդացնում նրա խնդիրները: Արցախի հայաթափումից մինչեւ սահմանամերձ շրջանների վրայ ճնշում, Հայաստանի իշխանութիւնների նկատմամբ արհամարհական վերաբերմունքից մինչեւ պահպանողական ու համայնավար տարրերի օգտագործում, Մոսկուան հիւսում է իր ոստայնը, որի մէջ քաշկռտւում ենք, պառակտուելով եւ տկարանալով մինչեւ նոր գաղութատիրութեան հաստատում, միութենական մի պայմանագրի ներքեւ:

Այստեղ պէտք է նշել, որ հայ ազգային-քաղաքական կեանքում տեղ չի կարող ունենալ համայնավար կուսակցութիւնը, որ պէտք է լուծարուի,-քանի աշխարհով մէկ բացայայտուեց նրա գաղափարական եւ կազմակերպական սնանկութիւնը եւ ապազգային քաղաքականութիւնը: Աւելորդ են եւ ժամանակի վատնում են մարտավարական եւ ձեւական շրջադարձութիւնները: Անհատ համայնավարների, որպէս հայ մարդ փրկութեան ճանապարհը հրաժարումն է այդ կուսակցութիւնից եւ աշխատանքով ու զոհաբերութեամբ բացայայտումը իրենց անհատական արժէքին:

ՉՇԵՂՈՒԵՆՔ ԱԶԳԻ ՕՐԷՆՔԻՑ

Վերը յիշուած տագնապալի եւ մտահոգիչ պատկերին դիմաց, հայ մարդը հարցնում է թէ ո՞րն է այլընտրանքը, ո՞րն է փրկութեան բանալին: Առաջին հերթին, մարդիկ այլընտրանքը տեսնում են դրսից գալիք հրաշք լուծումների մէջ: Ոմանց համար, արեւմտեան «բիզնես»ի կապկումը դառել է այն թալիսմանը, որ աղքատ եւ յետամնաց Հայաստանը մէկ օրից միւսը պիտի բարձրացնի եւրոպայի տնտեսական մակարդակին, իսկ ժողովուրդը պիտի վերափոխուի եւրոպացու, թէ կենցաղով եւ թէ գործունէութեամբ:

Իրենից դուրս օգնութիւն եւ հրաշք փնտռող հայը լաւ պիտի իմանայ, որ կեանքը մրցակցութիւն է, անխնայ պայքար է մանաւանդ արեւմտեան երկրների մէջ. ոչ մէկ օտար ազգ կամ պետութիւն նուէրներ չի անելու հայերին, լաւագոյն պարագային Հայաստանը պէտք է դառնայ օտար տնտեսութեան ծառայող ու նրա կողմից շահագործուող մի գաղութ: Վերջին յիսուն տարիների Երրորդ Աշխարհի եւ ոչ զարգացած երկրների պատմութիւնը ցոյց է տալիս, որ չկայ տնտեսական ինքնուրոյն վերականգնում առանց տքնաջան եւ երկարաշունչ աշխատանքի եւ զոհողութիւնների: Հարստութիւնը կարելի է կամ գողանալ, կամ ստեղծել. առաջինը կարող են անել եւ անպատիժ մնալ միայն ռազմա-քաղաքական մեծ ուժերը, իսկ տկար եւ աղքատ ժողովուրդը ինքն իր մէջ պէտք է գտնի գերմարդկային ճիգի եւ ստեղծագործ աշխատանքի ուժի աղբիւրը, ապա թէ ոչ նա կ'ընկնի հումքի վաճառքի եւ հասարակութեան անքարոյ շահագործման կործանիչ ոլորապտոյտին մէջ: Փրկութիւնը գտնւում է մե՛ր մէջ, պիտի յենուել մե՛ր ուժերի վրայ, իսկ ուժի հիմքը մէկ է՝ Ազգի ինքնագիտակցութիւնը եւ պայքարելու վճիռը: Յատկապէս խորհրդային-համայնավար խորշակից վառուած տնտեսութիւնների համար չկան հեշտ ու հաճելի լուծումներ, չկայ վերականգնում առանց մեծ զոհողութիւնների: Բայց ի՞նչն է որ մեզ պիտի համոզի, որ մեր ներկան զոհաբերենք ի խնդիր փայլուն ապագային: Այսօր, այս հարցին թերահաւատ պատասխան են տալիս Հայաստանից արտագաղթողները, որոնց թիւը աճում է եւ հասնում մտահոգիչ չափերի. նրանք փնտռում են արտասահման, յուսալով այնտեղ գտնել բարօր եւ անվտանգ կեանք ներկա՛յ սերունդի համար:

Ոչ մէկ տրամաբանութիւն կարող է համոզել հայը, որ մնայ կառչած իր հողին, կռուի եւ մեռնի այդ հողի համար, զոհաբերի իր առօրեայ հանգիստը ի խնդիր գալիք սերունդների երջանկութեան. այո՛, ոչ մէկ տրամաբանութիւն, քանի հարցը տնտեսական չէ, այլ գոյութենական:

Կա՛յ Ազգի եւ հայրենիքի գոյութեան հարց եւ նրանք, ովքեր վճռել են, որ հայ ազգը պիտի ապրի, պիտի ստեղծագործի եւ պիտի պայքարի իր հայրենիքում եւ իր հայրենիքի համար, նրանք շալակելու են Ազգի լինելութեան բեռը դէպի յաղթանակ: Պայքարն է, եւ միայն պայքարն է հայերի գոյութեան իմաստը եւ այստեղ է նրա ուժի եւ վերականգնման աղբիւրը:

Պիտի ասենք. ո՛չ: Այն ոչ-ը, որ պայմանաւորուած է ոչ թէ համակերպումով, այլ դիմադրութեամբ, հոգիների եւ մտքերի ազատագրութեամբ եւ յեղափոխիչ ստեղծագործութեամբ: Այո՛, պիտի մերժել գլուխ ծռել «ճակատագրի» կամ այլ օտար ճնշումների առաջ, պիտի մերժել հնազանդուել միջազգային, շրջանային կամ խորհրդային «խաղաղութեան» եւ «հաւասարակշռութեան» կանոններին:

Յատկապէս Հայաստանի ղեկավար շրջանակը շատ է սիրում խօսել հրէաների հզօր կազմակերպուածութեան եւ Իսրայէլի հրաշագործութիւնների մասին: Բայց պիտի ընդունել, որ հրէաները գործեցին իրենց «հրաշքը» մերժելով թափառական ցեղախմբի այն կեանքը, որ իրենց վիճակուեց 2000 տարի. նրանք նետուեցին կռուի դաշտ այն գիտակցութեամբ, որ ներկան պիտի զոհաբերուի գալիք սերունդների համար: Այնքան ժամանակ, որ նրանք ծառայում էին փողին, նրանք դառնում էին օտարի ստրուկը եւ նիւթական բարօրութիւն փնտռող խղճուկ փերեզակը. նրանք յաղթանակեցին միայն այն ժամանակ, երբ որոշեցին ծառայել գաղափարին եւ ոչ նիւթին, իրենց Աստծուն եւ ոչ օտարին: Այսպէս կազմաւորուեց այն օրէնքը, որ անցնող հարիւր տարիներին դառել է հիմքը հրէաների կազմակերպութեան:

Բայց մենք մոռացել ենք, որ հրէաներից սովորելիք չունենք, քանի մենք վաղուց մշակել ենք այն ներքին օրէնքը, որ միակ պատուանդանն է Ազգի յառաջադէմ պայքարին: Մենք անտեսում ենք այն հզօր ուժը, որ առաջ է մղում հայ ազգը հակառակ հալածանքներին, ճնշումներին, ցեղասպանութեան, բռնագաղթերին եւ ստրկացման: Մոռացել ենք եւ փորձում ենք հնարել նոր, անհիմն օրէնքներ, որոնց չի յաջողւում միաւորել Ազգը եւ տանել պայքարի, քանի նրանք չեն համապատասխանում Ազգի լինելութեան:

Ոմանք ազգը արժեւորում են նրա առեւտրական կամ մշակութային կարողութիւններով եւ ցանկանում են լինել ընդունելի բոլոր ազգերի կողմից, ամենուրէք: Առեւտրական-կարաւանի կամ մշակութային-ցեղախմբի այս մտածելակերպը ստրուկի ինքնարդարացումն է, դա ուրիշ ազգերի օրէնքների համակերպման ուղին է:

Հակադրուելով այս մօտեցման, ուրիշներ հայութեան իւրայատկութիւնը փորձում են տեսնել ցեղային անորոշ յատկանիշների, հեթանոսութեան եւ դիւցազնական տիպարների մէջ: Ճիշտ է, որ այլ ժողովուրդների նման, հայերն էլ պաշտել են կրակը եւ պատերազմի ու սիրոյ չաստուածները. բայց Ազգը այս հնադարեան հասկացութիւնը փոխարինել է քրիստոնէութեամբ, քանի շրջապատի հեթանոս միւս ժողովուրդները ստեղծում էին պետական հզօր մեքենայ եւ հայերի միակ փրկութիւնը խմբուելն էր եկեղեցիի կազմակերպուածութեան շուրջ: Ցեղապաշտութիւնը անտաշ կիրք է, որ հակասում է ազգային-պետական գիտակցութեան:

Իսկ շատեր քրիստոնէութիւնը նկատում են ներքին օրէնք. բայց նրանք մոռանում են, որ Ազգի ներքին օրէնքը գերազանցում է մարդկութեան եւ հասարակութեան բարոյականին. քրիստոնէութիւնը կոսմոպոլիտ գաղափարախօսութիւն է, որքան էլ որ մեր պատարագը կրի հայկական դրոշմ: Ազգի օրէնքը չի ժխտում մարդկութիւնը, բայց մինչեւ քաղաքական-ազգի եւ նրա քաղաքական-տան կազմաւորումը նա ունի ի՛ր առաջնահերթութիւնը:

Քաղաքական-ազգի առանցքը Հայաստանն է, իր անցեալով, ներկայով եւ գալիքով. ամեն ինչ սկսւում եւ վերջանում է հայրենիքում. տնտեսութիւն, մշակութային-ընկերային կառոյցներ, քաղաքական կեանք եւ ստեղծագործ գաղափարներ կազմաւորւում են եւ զարգանում անկախ եւ ազատ հայրենիքում: Հայաստանը հայեցիութեան օրրանն է, Ազգի օջախն է եւ նրա հիմքը: Ազգի լինելութիւնը՝ Հայաստանի ամբողջացումը, հզօրացումը եւ զարգացումն է, Արցախից՝ Սասուն:

Քաղաքական լինելութեան ձգտող ազգը իւրայատուկ է: Յատկանշական է, որ հայ ժողովուրդը շփոթւում եւ ընկրկում է երբ նրա հետ վարւում են որպէս սովորական հաւաքականութիւն, որ պիտի ենթարկուի ընկերա-տնտեսական սովորական օրինաչափութիւնների. նա հերոսանում է, երբ նրան նայում են որպէս քաղաքական պայքարի մարտիկ, երբ նա ինքն իրեն է նայում որպէս տէրը՝ Միացեալ Հայաստանին:

Ազգի երկրորդ առանցքը ազատատենչութիւնն է: Ըմբոստութեան մէջն է նրա արժանապատուութիւնը: Ազգը մերժում է ստրկութիւնը եւ համակերպումը եւ պայքարում է անկախութեան եւ ազատութեան համար: Այո՛, Ազգը ունի Հայաստանի անկախութեան ի՛ր պայքարը, որովհետեւ ուրիշի կողմից շնորհուած ազատութիւնը չի կարելի պահել առանց ներքին հզօրութեան, իսկ այդ ուժը կազմաւորւում է եւ կոփւում՝ ուրոյն պայքարի մէջ:

Պէտք է հաստատել նաեւ, որ անկախութեան պայքարի մէջն է մեր հոգիների եւ մտքերի ազատագրումը, մեր տնտեսական եւ ընկերային վերականգնումը, Ազգի կազմակերպուածութիւնը եւ հայկական բռնագրաւուած հողերի փրկութիւնը, քանի ստրկացած հոգիները չեն, որ պիտի ազատագրեն Արցախը, այլ՝ գիտակից եւ անդուլ կերպով զոհաբերող ազատները: Ազգի եւ հայրենիքի վերականգնումը եւ յառաջդիմութիւնը հիմնւում է այս ներքին ամրութեան վրայ:

Անկախութեան պայքարը նաեւ գրաւականն է Ազգի միասնութեան: Հազարամեակների գոյատեւման գործընթացից յետոյ, հասել է ժամը երբ հարցականի տակ է հայերի եւ նրանց հայրենիքի ինքնութիւնը: Սերունդները իրենք իրենց պիտի ճանաչեն Սարդարապատից, որովհետեւ անկախութեան մարտն է Ազգի գոյութեան իմաստը եւ փաստը եւ ոչ՝ գոյատեւման ազգավնաս քաշկռտուքը, որ տանում է տարանջատման, ձուլման եւ ազգային նկարագրի այլակերպման: Պայքարը հակադրւում է օտարների ճնշմանը, մեզ համար շահում է մարդկութեան յարգանքը եւ կերտում է մեր հաւաքական ուժը:

Հետեւաբար, հակառակ այն իրողութեան, որ անկախութեան հանրաքուէն արդիւնքն է «անկախութեան գործընթաց» կոչուած կայսերական հաշիւներին, որ հանրաքուէին յաջորդող ժամանակաշրջանի համար Հայաստանի իշխանութիւնները չունեն պատկերացում եւ ծրագիր, պիտի ասել «այո՛» անկախութեան, նախ որովհետեւ անհեթեթ է Մայիս 28 կերտած ազգին համար ասել հակառակը, ապա՝ այն խոր համոզմամբ, որ «այո՛» ենք ասում մեր ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ եւ ոչ թէ օտարի մանեւրին:

Անշուշտ, չպէտք է բաւարարուել սկզբունքային յայտարարութիւններով: Ազգի օրէնքը պիտի առաջնորդի մեր առօրեայ կեանքը: Անկախութեան պայքարը նաեւ չի ժխտում մարտավարական շարժումները, բայց նրանց տալիս է իր արժեւորումը: Այսպէս մեզ կարող են պարտադրել, որ ստորագրենք Միութենական մի պայմանագիր. դա կը լինի նոր ստրկական վիճակ, որ ընդունում ենք քանի տկար ենք, այսօր: Պարտադրանքն է, որ մեզ կարող է տանել պարագայական նահանջների եւ ոչ այն արտառոց միտքը թէ՝ «Մենք եւ ռուսները հոգեհարազատներն ենք» եւ թէ՝ «օրհնեալ լինի այն սհաթը երբ ռուսները մտան Հայաստան»: Բնա՛ւ, երբեք: Ազգի բարոյականը մերժում է խեղճ համակերպումը նրանց, ովքեր հայ ժողովրդին առաջարկում են հպատակութիւնը Ցարին կամ Սուլթանին, որպէս հոգեկան կամ ազգային արժէք: Մեր հոգեհարազատը մեր հայրենիքն է եւ մեր ազգակիցը. միւս ազգերը արժէք են մեզ համար այնքան, որքան նրանք հարստացնում են մարդկային քաղաքակրթութիւնը: Պիտի օրհնուի այն ժամը, երբ 1918ի Մայիսի 28ին, հռչակուեց Ազատ եւ Անկախ Հայաստանը եւ վերականգնուեց Հայոց Ազգի քաղաքական անհատականութիւնը:

Անկախութեան պայքարի հիմքը գաղափարական-բարոյական չափանիշներն են. չկայ պայքարող ազգ, երբ չկայ գիտակից եւ առողջ հասարակութիւն: Հետեւաբար մեր առաջնահերթ խնդիրն է սոցիալական վերականգնումը, որ ինքնաբերաբար տանում է դէպի նոր սերունդների դաստիարակութեան արմատական վերանայում, զանգուածային լրատուութեան լիցքաւորում մտքո՛վ եւ ազգային-բարոյական ուղղուածութեամբ, հարիւր հազարաւոր անտուն եւ անտէր հայերի նկատմամբ պետական եւ ժողովրդային ծրագրուած եւ հետեւողական հոգածութիւն, ժողովրդավարութեան եւ ազատութիւնների ամրապնդում եւ ընկերային ու առողջական հարցերի նկատմամբ պատասխանատու եւ գիտակից մօտեցում:

Բնականաբար, անհրաժեշտութիւն է կառուցումը առողջ եւ առաջադէմ պետականութեան, որդեգրումը համապատասխան օրէնքների եւ նրանց գործադրումը անաչառ հետեւողականութեամբ, իրարից բաժանումը օրէնսդիր, գործադիր եւ դատական իշխանութիւնների, վերանայումը պետական վարչամեքենայի եւ անմիջական կապերի հաստատումը արտաքին աշխարհի հետ:

Տնտեսութիւնը հիմքն է հասարակութեան եւ պետականութեան վերականգնման: Բայց առանց բարոյական չափանիշների չի կարելի ունենալ առաջադէմ եւ արդիւնաւէտ տնտեսութիւն. օրէնքը պիտի նախատեսի դրամագլուխի ազատութեան սահմանները եւ միաժամանակ պիտի ապահովի սոցիալական համեստ խաւի կենցաղը եւ ապրուստի նուազագոյն ընդունելի մակարդակը: Առանց փոխադարձ վստահութեան եւ երաշխիքների չի կարող ծաղկել տնտեսութիւնը, իսկ ժողովուրդը չի կարող տանել ստեղծագործ աշխատանք: Օրէնքը եւ նրա գործադրութիւնը պայքարի յենապահներն են:

Սակայն առաջնահերթ խնդիրը Ազգի միասնութիւնն է եւ այդ պէտք է իրականանայ, երբ մերժուի գաւառային, հատուածական եւ դասակարգային մտայնութիւնը, երբ երիտասարդ սերունդների դաստիարակութիւնը, հայաստանեան եւ սփիւռքեան զանգուածների մտածողութիւնը, ինչպէս նաեւ տնտեսական քաղաքականութիւնը որպէս վարիչ սկզբունք ընդունեն իւրաքանչիւր հայի եւ հայկական հաւաքականութեան ուրոյն արժէք լինելը թէ՛ մարդկային եւ թէ՛ ազգային իմաստով:

Տնտեսական, սոցիալական եւ հասարակական վերականգնման զուգահեռ պիտի զարգանայ քաղաքական անհատականութիւնը, որի առանցքը հանդիսանում են որակեալ կադրերը: Բոլոր գործադաշտերում զարգացած առաջադէմ եւ աշխատասէր կադրերի պատրաստութիւնը պայքարի ողնաշարն է: Եւ այսպէս, նորից վերադառնում ենք կրթական քաղաքականութեան եւ աշխարհին բացուող գիտութեան եւ մշակոյթին:

Ազգի վերականգնման եւ որակաւորման ճանապարհը միակն է, որ մեզ պիտի տանի դէպի ստեղծագործ պայքար բոլոր մակարդակների վրայ: Կասկած պիտի չունենալ, որ այս հսկայական ճիգի մէջ միացեալ է հայութիւնը. յատկապէս սփիւռքեան հայ գաղութները պէտք է ոգեւորուեն եւ ջանք թափեն ի խնդիր ոչ միայն Հայաստանի ինքնուրոյնութեան, այլ նաեւ Ազգի բոլոր զաւակների ինքնահաւաքման: Մենք հզօր ենք, երբ ունենք ազգային լինելութեան տեսլական, երբ հնազանդում ենք Ազգի բարոյական չափանիշներին եւ ճգնում ենք անդուլ, որպէս Հայաստանի Անկախութեան եւ Ազատութեան մարտիկներ: